

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

21.06.2019



Առողջապահական համակարգի սիրելի՛ աշխատակիցներ

Ընդունեք իմ շնորհավորանքները այսօր՝ հունիսի 21-ին նշվող ձեր մասնագիտական տոնիկապակցությամբ:

Հիրավի անգնահատելի ու ամենակարեւորներից է բուժաշխատողի գործունեության բնագավառը, որի համար շնորհակալ ենք իրենց կոչմանը հավատարիմ, աշխատանքին նվիրված ու միմիայն մասնագիտական ու մարդասիրական սկզբունքներով առաջնորդվող մեր բոլոր բժիշկներին ու բուժքույրերին:

Քանի որ գործ ունեք մարդու համար ամենաթանկի՛ առողջության հետ, մաղթում եմ, որ պատասխանատու եւ ճակատագրեր որոշող ձեր աշխատանքում՝ նվիրվածության ու ամեն մարդու հանդեպ բարեխիղճվերաբերմունքի արդյունքում, միշտ լինեք հարգված ու գնահատված:

Բա՛րձր պահեք ձեր մասնագիտության պատիվը, անձնվիրաբա՛ր ծառայեք հանրությանը, քանի որ ձեր ոլորտը ոչ միայն աշխատանք է, այլեւ՝ առաքելություն, իսկ ձեր անկեղծ հոգատարությունն ու արհեստավարժությունը մարդիկ ընդունում են երախտագիտությամբ:

Իսկ առողջապահական համակարգում այսօր պետության որդեգրած քաղաքականության շնորհիվ ընթացող բարեփոխումների նպատակը ձեր առավել արդյունավետ սոցիալական պաշտպանվածությունն է ու մեր քաղաքացիների՝ որակյալ բուժօգնություն ստանալու իրավունքի ապահովումը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով ձեզ Բուժաշխատողի օրվա առիթով, բոլորիդ մաղթում եմ մասնագիտական եւ աշխատանքային հաջողություններ, անձնական ձեռքբերումներ ու լավատեսություն:

